ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 39

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.06.2019թ. **ք. Իջևան** Ժամը 12:00

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Ցուցուլյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի 2018-2019 ուստարվա գործունեության մասին: **(Զեկուցող Մ. Ճաղարյան)**
2. ԵՊՀ ԻՄ-ի 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում: **(Զեկուցող Ա. Դավթյան)**
3. ԵՊՀ ԻՄ-ի 2020-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում: **(Զեկուցող Ա.Վ. Ցուցուլյան)**
4. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2019թ. հարցման արդյունքների մասին: **(Զեկուցող Մ. Ճաղարյան)**
5. Ընթացիկ հարցեր
   5.1. ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման 2019-2023թթ. և հեռակա ուսուցման 2019-2024թթ. ուսումնական պլանների հաստատում:
   5.2. Կրթական ծրագրերի հաստատում:

5.3. Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ Հովսեփ Մովսեսյանի հեղինակած «Քաղաքագիտություն» դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը տպագրության երաշխավորելու հարց:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին</u>՝ « ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի 2018-2019 ուստարվա գործունեության մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ.

-Որակյալ ուսուցման ապահովման ռազմավարական առաջնահերթ խնդրի իրականացման գրավականը մասնաճյուղում որակի ներքին ապահովման համակարգն է: ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքին համապատասխան՝ այդ գործընթացները համակարգվում և իրականացվում են Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից:

Նշենք, որ ուսումնական տարվա սկզբին բաժինը համալրվել է նոր աշխատակիցներով, ինչը նպաստել է նրա գործունեության ակտիվացմանը, հստակեցվել են նրանց գործառույթները, մշակվել և հաստատվել են բոլոր պաշտոնների անձնագրերը:

Մշտապես ունենալով պարոն Ա.Մակարյանի աջակցությունը՝ բաժինը աշխատել է թիմով, ընթացիկ աշխատանքների **ամենօրյա և ամենշաբաթյա** պլանավորմամբ: ՄԿՈԱ բաժնի ամբողջ գործունեությունն ամրագրված է բաժնի նիստերի արձանագրություններում և համապատասխան փաստաթղթերում:

Բաժինն իր գործունեությունը պլանավորում է կրթության որակի բնագավառում մասնաճյուղի ընտրած քաղաքականության և մասնաճյուղի

զարգացման 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրի հիման վրա, և ընթացիկ ուստարում ներառել է նրա 141 գործողություններից 28 գործողություն-միջոցառումներ (19.9%) ըստ որակյալ կրթություն, որակյալ ծառայություններ և արդյունավետ կառավարում 3 նպատակների:

Այդ գործողություններից 5-ն իրականացվել են, 17-ը ընթացքի մեջ են, 2 գործողություններից առայժմ ոչինչ գրեթե չի ձեռնարկվել, իսկ 4-ն ըստ պլանավորման իրականացվելու են հաջորդ ուստարում:

Բաժնի աշխատակիցները կարևորում են մասնաճյուղում որակի ներքին ապահովմանը միտված գործընթացների արդյունավետ իրականացումը և իրենց մշտական խորհրդատվությամբ, մշակած փաստաթղթերով, ուսումնասիրություններով աջակցում են բոլոր ենթակառուցվածքներին՝ իրենց գործունեության պլանավորման, իրականացման, գործունեության վերլուծության և գնահատման գործում:

Բաժինը տարբեր գործընթացների արդյունավետության և խնդիրների վերհանման նպատակով մշտապես իրականացնում է տարբեր ուսումնասիրություններ, զեկուցում դրանց արդյունքների մասին, ապա այդ արդյունքների հիման վրա մշակում է դրանց բարելավման առաջարկներ:

Մի շարք գործընթացներ բաժնի գործունեության հիմնական բաղադրիչն են կազմում.

-մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների (ԳԱՑ-ի) վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,

-“Դասընթացների փաթեթներ”-ի մշակման վերաբերյալ խորհրդատվության պարբերաբար տրամադրում,

- կրթական ծրագրերի ղեկավարների և ամբիոնների հետ մշտական բովանդակային աշխատանքի իրականացում,

- արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություն, հավաքագրված տվյալների վերլուծություն, առաջարկությունների փաթեթների մշակում,

- մասնաճյուղի պաշտոնական կայքի արդյունավետության բարելավում և այլն:

Նշենք, որ ընթացիկ ուստարում բաժինը բացի պլանով նախատեսված հիմնական գործընթացներից, իր անմիջական մասնակցությամբ, խորհրդատվությամբ իրականացրել է երկու մեծ և կարևոր գործընթաց:

Ուսումնական տարին ՄԿՈԱ բաժինը սկսել է մասնաճյուղի ստորաբաժանումների համար աշխատանքային պլանի նոր ձևաչափի առաջարկով և ներդնումով: Այն հնարավորություն է տալիս հստակ ներկայացնել բաժնի գործունեությունը համաձայն մասնաճյուղի ընթացիկ ռազմավարական պլանի, ներկայացնում է յուրաքանչյուր ռազմավարական գործողության նպատակը, նրա իրականացումից ստորաբաժանման ակնկալիքները, նպատակին հասնելու համար կատարվելիք քայլերը և յուրաքանչյուր գործողության կատարողականի ցուցիչները:

Նման ձևաչափը նպատակ ունի ***ապահովել*** մասնաճյուղի ռազմավարական գործողությունների իրականացման վերահսկումը, նրանց ժամանակային պլանավորված իրականացումը և ապա ըստ կատարողականի ցուցիչների հաշվետվությունը՝ հերթական գործընթացի բարեհաջող իրականացման վերաբերյալ: Բաժինն իր խորհրդատվություններով աջակցել է ստորաբաժանումների ղեկավարներին՝ ընթացիկ ուստարվա աշխատանքային պլանները կազմելու գործում:

Մասնաճյուղի 9 կրթական ծրագրերի փաստաթղթային փաթեթներն ըստ ժամանակացույցի անցել են ստուգման և խմբագրման գործընթաց մեր բաժնում և Ուսումնամեթոդական վարչությունում, ապա մասնաճյուղի տնօրեն պարոն Ա.Ցուցուլյանի միջնորդությամբ և ԵՊՀ պրոռեկտոր պարոն Սողոմոնյանի հրահանգով այդ ծրագրերից 6-ը («Հայոց լեզու և

գրականություն», »Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Պատմություն», «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն») արտաքին փորձաքննություն են անցել ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներում, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը՝ Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ծրագիրը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, «Դիզայն» կրթական ծրագրի փորձաքննությունը ընթացքի մեջ է: Արտաքին փորձագետների դրական կարծիքի հիման վրա 5 կրթական ծրագրեր արդեն հաստատվել են մասնաճյուղի ԳԽ –ում, իսկ 3-ն այսօր կներկայացվեն հաստատման: Հաստատված ծրագրերի և փորձագետների առաջարկների հիման վրա ամբիոններում՝ կրթական ծրագրի ղեկավարների հետ համագործակցությամբ վերանայվել և կազմվել են 2019-23 թթ. կրթական ծրագրերը:

Նշենք, որ բաժինն աջակցել է նաև մասնաճյուղի 4 նոր կրթական ծրագրերի՝ «Ռուսաց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Դեկորատիվ կիրառական արվեստ» առաջարկի հայտերի և ուսումնական փաթեթների հավաքման, համապատասխան կրթական ծրագրերի կազմման աշխատանքներին:

Այժմ ըստ ռազմավարական պլանավորման ներկայացնենք բաժնի գործունեությունն ըստ ուղղությունների:

Ռազմավարական 3 նպատակների իրականացման շրջանակներում ՄԿՈԱ բաժինը իրականացրել է հետևյալ աշխատանքները:

<u>Խորհրդատվությունների շրջանակներում.</u>

1. աջակցել է «Երիտասարդ դասախոսների աջակցման և առաջավոր փորձի փոխանցման կենտրոնի» և դասախոսների վերապատրաստման աշխատանքների համակարգող Նառա Ղազարյանին վերապատրաստման դասընթացների ընտրության,

նրանց արդյունավետության գնահատման ձևերի ընտրության և հավաքագրված արդյունքների վերլուծության հարցերում, խորհրդտվությամբ աջակցել է նրան դասախոսական կազմի բազմագործոն գնահատման համակարգի մշակման աշխատանքներում և այլն /ՌԾԳ 1.2.1, 1.2.2./:

2. որպես մշտական գործընթաց խորհրդատվությամբ աջակցել է դասախոսներին **«Դասընթացների փաթեթներ»**-ի արդյունավետ վարման գործընթացում, նոր դասավանդող դասախոսների համար կազմակերպվել է դասընթաց, նրանց տրամադրվել է համապատասխան մեթոդական ուղեցույցը /ՌԾ 1.2.5/, նշենք, որ այդ ուղեցույցի <u>2-րդ և 3-րդ բաժինները</u> մշակված են, չնայած պլանավորված ժամկետում նրանք չեն մտել կիրառության մեջ, սակայն հույս ենք հայտնում, որ նոր ուստարվա սկզբին այն կներկայացվի ամբիոններ՝ քննարկման, դիտողությունների և առաջարկների հավաքագրման համար:
3. դասընթացների և մշտական հանդիպում-քննարկումների միջոցով աջակցել է կրթական ծրագրեր մշակող աշխատանքային խմբերին բակալավրի կրթական ծրագրերը դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցվածության ապահովման տեսանկյունից վերանայման գործընթացին, և դասախոսներին օգնել է դասընթացների նկարագրիչների կազմման գործում /ՌԾ 1.2.4./:

Ռազմավարական նշված խնդիրների իրականացման շրջանակներում կարևոր ձեռքբերում է որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական խմբի ստեղծումը /ՌԾԳ 1.3.1/. նպատակը՝ ուսանողներին կրթական ծրագրերի որակի գնահատման գործընթացներում ներգրավելն է, իսկ ակնկալիքները՝ կրթական ծրագրերի որակի բարելավումը: Նրանց համար մշակվել են գործառույթներ, և նրանց հետ համատեղ կազմվել է 2018-19 ուստարվա նրանց աշխատանքային պլանը: Նրանք աջակցում են կրթական

ծրագրերի ղեկավարներին, հետամուտ են ուսանողական հարցումների արդ-յունքներին և ապահովում են հետադարձ կապը: Նրանց աջակցությամբ բաժինն իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ, քննարկումներ, հարցումներ և այլն:

1. Ուսանողական խմբերի աջակցությամբ կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ **պրակտիկա անցած ուսանողների հետ**, ներկայացվել և քննարկվել են 2017-2018 ուստարվա ընթացքում արտադրական և մանկավարժական պրակտիկա անցած ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության արդյունքները: Բաժինը այդ հանդիպումներով աջակցել է պրակտկաների կազմակերպման բաժնին և ուներ իր ակնկալիքները.

- ներգրավել ուսանողներին պրակտիկաների կազմակերպման գործընթացներում,
- հնարավորություն տալ նրանց ներկայացնելու իրենց առաջարկները պրակտիկայի կազմակերպան գործընթացի բարելավման ուղղությամբ,
- մոտիվացնել նրանց համագործակցելու կրթական ծրագրերի պատասխանատուների և պրակտիկաների ղեկավարների հետ պրակտիկաների ծրագրերի կազմման ժամանակ,
- անկաշկանդ ներկայացնել իրենց նախասիրությունները և պատկերացումները պրակտիկաների բովանդակության և իրականացման վերաբերյալ,
- վեր հանել պրակտիկաների ընթացքում առաջացած խնդիրները:

Արդյունքը՝ ուսանողների կողմից կատարված բավականին հետաքրքիր և արդյունավետ առաջարկներ, որոնք ամփոփվել և ներկայացվել են համապատասխան բաժիններին:

2. Որակի ներքին գործընթացներին աջակցող խմբի ուսանողների միջոցով բաժինը հարցում է անցկացրել մարզի հասարակայնության շրջանում՝ մասնաճյուղի վերաբերյալ հասարակայնության կարծիքը և ներսից

անտեսանելի խնդիրները բացահայտելու համար: Մշակվել էր պարզ և հեշտ ընկալելի հարցաշար, որով ուսանողները հանդիպել են տարբեր տարիքի և սեռի, տարբեր զբաղմունքի տեր տավուշցիների հետ (մոտ 50 հոգի): Ըստ հարցվողների իրենց երեխաների և ծանոթների մասնաճյուղ դիմելու հիմնական պատճառները որակյալ և բարձր կրթության տրամադրումն է, բուհի ապահովվածությունը բարձրորակ մասնագետներով, բարձր հեղինակությունը, մարզում գտնվելը, ֆինանսական հնարավորությունները (մատչելի վարձաչափերը), հեռավորության հաղթահարելիությունը: Այսինքն, մասնաճյուղի առկայությունը մարզում բացի բարձրագույն ուսումնառություն ապահովելը լուծում է նաև մի շարք սոցիալական խնդիրներ:

Իսկ ահա ըստ հետազոտության ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ չդիմելու հիմնական պատճառը նախընտրելի մասնագիտության բացակայությունն է:

Հարցվողները նշել են նաև, որ մասնաճյուղում կրթություն ստանալը բավականին օգնում է հետագա կարիերայի կառուցմանը, հատկապես մարզի ներսում, քանի որ մասնաճյուղն արդեն իսկ իր բարձր հեղինակության շնորհիվ, իր շրջանավարտների հանդեպ որոշակի դրական կարծիք է ապահովում գործատուի համար:

Արդյունքը՝ մարզում մասնաճյուղի բարձր վարկանիշի հաստատում:

3. Ուսանողական խմբի աջակցությամբ բաժինը ուսումնասիրություններ է կատարել մասնաճյուղի **<u>ակադեմիական ազնվության գործող կարգի</u>** և նրա վերանայման անհրաժեշտության վերաբերյալ, մասնաճյուղում ակադեմիական ազնվության առկա մակարդակի և դրանից ներքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ **/ՌԾԳ 1.2.6/: Ֆ**ակուլտետներում կազմակերպվել են քննարկում-հանդիպումներ ուսանողների և դասախոսների հետ, հավաքագրվել են նրանց կարծիքները և առաջարկությունները գրագողությունը կանխելու և ակադեմիական ազնվության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Արդյունքը՝ Դրանց հիման վրա բաժնի կողմից մշակված «Էթիկայի կանոնագիրք» ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի համար /**ՌԾԳ 8.4.1./,** և վերանայված 2015թ.-ի դեկտեմբերից գործող «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ակադեմիական ազնվության կանոնակարգ: Երկու փաստաթղթերը կուղարկվեն բոլոր ստորաբաժանումներին՝ վերջնական քննարկման համար և խմբագրվելուց հետո նոր ուսումնական տարվա սկզբին կներկայացվեն հաստատման:

<u>Տարբեր մեխանիզմներով կատարված ուսումնասիրությունների շրջանակներում.</u>

4. Բաժինը մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի քննարկմանն է ներկայացրել **«Դասընթացի գնահատման հարցաթերթ»-ի** տարբերակը /**ՌԾԳ 1.3.4./**: Դասընթացի որակի վերաբերյալ ուսանողի կարծիքի ուսումնասիրության նպատակն է պարզել ուսանողների բավարարվածությունը դասընթացի թեմատիկ կառուցվածքից և նրա կազմակերպումից, դասընթացի տված ուսումնառության հնարավորություններից ու անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածությունից և այլն:

Նշենք, որ ամբիոններում քննարկվելուց հետո հարցաշարի վերաբերյալ առաջարկները ներկայացվել են ՄԿՈԱ բաժին, որտեղ բոլոր առաջարկների և կարծիքների հիման վրա կազմվել է հարցաշարի վերջնական տարբերակը: Դասընթացի գնահատման հարցաթերթը փորձարկվել է 2-րդ կիսամյակի քննաշրջանի ժամանակ տարբեր կրթական ծրագրերի 8 դասընթացների համար, որպեսզի պարզաբանվի ուսանողների կողմից հարցաշարի ընկալման և հասկացվածության մակարդակը:

Արդյունքը՝ մշակված և փորձարկված հարցաթերթ, որը կդառնա դասընթացի փաթեթի անբաժանելի մասը և դասախոսին աջակցող գործիք:

5. Բաժինը մասնաճյուղի տնօրենի նախաձեռնությամբ և ամբիոնների աջակցությամբ առաջին անգամ կազմակերպել է ուսանողներին **մնացորդային գիտելիքների ստուգումներ /ՌԾԳ 1.2.3./**: Ստուգումներն անց են կացվել որոշ դեպքերում մեկ դասընթացից, իսկ հիմնականում մասնագիտական մի քանի դասընթացների շրջանակներում: Ամբիոնները ստուգումների համար կիրառել են տարբեր ձևեր՝ թեստային, գրավոր և բանավոր:

Նշենք, որ կարևորվել էր մնացորդային գիտելիքի ստուգման նպատակը, այն է՝ բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը, վեր հանել ուսանողների ձեռքբերումները, գնահատել նրանց մասնագիտական հետագա գործունեության համար անհրաժեշտ հիմնարար գիտելիքների, ձևավորված կարողությունների և հմտությունների առկայության մակարդակը:

Ստուգման արդյունքները վերլուծելուց հետո բաժինը նաև կազմակերպել է մնացորդային գիտելիքի ստուգման արդյունքների քննարկումներ ուսանողների հետ: Հանդիպումների նպատակն էր լսել նրանց կարծիքները ստուգման անցկացման ձևի, ժամանակի, բովանդակության և ընդհանրապես նրա կարևորության վերաբերյալ: Ապա ամբիոններից բաժին են ներկայացնել մնացորդային գիտելիքի ստուգման կազմակերպման ձևի, դասընթացների, պարբերականության, գնահատման և տարբերակների բովանդակության վերաբերյալ իրենց առաջարկները:

Արդյունքը՝ Հավաքված առաջարկների հիման վրա մշակված մնացորդային գիտելիքի ստուգման ընթացակարգ և ուղեցույց, որը կներկայացվի վերջնական քննարկման և հաստատման:

6. Բաժինը կազմակերպել է հանդիպումներ ավարտական կուրսերի ուսանողների հետ՝ **կրթական ծրագրերի գնահատման նպատակով /ՌԾԳ 1.3.4./**:

Մասնաճյուղի 11 մասնագիտությունների ավարտական կուրսերում ավարտական աշխատանքի պաշտպանությունից հետո բաժնի

աշխատակիցները հանդիպել են տվյալ կրթական ծրագրի ուսանող-շրջանավարտների հետ և տեղի է ունեցել հանդիպում-քննարկում՝ անմիջական շփման և մտերմիկ զրույցի մթնոլորտում:

Հանդիպման նպատակն էր պարզել արդեն շրջանավարտների կարծիքը մասնագիտության կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքներին իրենց մասնագիտական կարողությունների և ձեռբերումների համապատասխանության վերաբերյալ:

Քննարկումը անց է կացվել ավարտական կուրսի գրեթե բոլոր շրջանավարտների մասնակցությամբ, և նրանց կարծիքները բաժինը վերլուծել է և ամփոփել է ընդհանուր ձևով:

Քննարկմանը բաժնի աշխատակիցները ներկայացել են նախապես կազմված հարցաշարերով, որոնցում ներառված հարցերը ձևակերպվել են՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքները: Վերջնարդյունքների ձեռքբերման վերաբերյալ հարցերը բաժանվել են 3 խմբի և ներառել 2-3 հարց գիտելիքի և իմացության, մասնագիտական կարողությունների և ընդհանրական կարողությունների ձևավորման մակարդակի վերաբերյալ:

Հանդիպումների ժամանակ պարզվեց շրջանավարտների մեծ մասի անիրազեկվածությունն իրենց կրթական ծրագրերից և կրթական վերջնարդյունքներից: Այստեղ ակնհայտորեն իրենց թերացումներն ունեն և կրթական ծրագրերի ղեկավարները, ուսումնական խորհրդատուները և մնացած բոլոր օղակները:

Արդյունքը՝ վերանայել բաժնի կողմից մշակված կրթական ծրագրի գնահատման հարշաթերթը, ամբիոններից ստանալ իրենց կրթական ծրագրերի գնահատման առաջարկներ և նրանց անմիջական մասնակցությամբ հավանաբար մշակել կրթական ծրագրի գնահատման հարցաթերթ:

7. Այս տարի նույնպես բաժինը հաշվետվության հատուկ ձևաթերթի միջոցով հավաքագրել է **ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների**

կարծիքները և առաջարկները: Այդ հաշվետվության մեջ նախագահները գնահատել և վերլուծել են շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, բնութագրել ավարտական աշխատանքների թեմաները, դրանց արդիականությունը և համապատասխանությունը որակավորմանը, շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունները: Բաժինն ուսումնասիրել է բոլոր հանձնաժողովների կարծիքները և առաջարկները, կատարել է վերլուծություն ըստ մասնագիտությունների, ապա ամփոփել մասնաճյուղի համար: Առանձնացվել են ամբիոնների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկները, որոնք վերաբերել են հարցաշարերի և ավարտական աշխատանքների թեմատիկայի արդիականացմանը, տարածաշրջանային հիմնախնդիրներին, լաբորատոր բազայի կատարելագործմանն ու պրակտիկաների ավելի արդյունավետ ու նպատակաուղղված անցկացմանը: Սա կրթական ծրագրի գնահատման մեխանիզմ է **/ՌԾԳ 1.3.4./** Բաժնի կողմից վերլուծված արդյունքները՝ կարծիքներով և առաջարկներով կուղարկվեն համապատասխան ամբիոններ:

8. Բաժնի երրորդ ռազմավարական խնդիրը տարբեր մեխանիզմներով մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների **կարիքների ուսումնասիրությունն է,** խնդիրների հավաքագրումը, վերլուծումը և գնահատումը /ՌԾ 6.1.1, 1.3.6/: Հաշվետու ուստարում բաժինն առցանց հարցմամբ իրականացրել է.

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ **<u>արտաքին շահակիցների</u>** կարծիքի ուսումնասիրություն
2. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից **<u>պրոֆեսորադասախոսական անձնակազմի</u>** բավարարվածության ուսումնասիրություն
3. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից **<u>վարչական անձնակազմի</u>** բավարարվածության ուսումնասիրություն

4. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից **<u>ուսանողների</u>** բավարարվածության ուսումնասիրություն, հարցմանը մասնակցել են 1-3 կուրսերի գրեթե բոլոր ուսանողները: Հարցումն ընդգրկել է 3 բաժին. բավարարվածությունը մասնաճյուղից, պրակտիկաների կազմակերպումից և մասնաճյուղում ուսանողների գնահատումից, նշենք, որ այս տարի նույնպես վերանայվել՝ հարցաշարը:

Քանի որ հարցումներն անց են կացվել ընթացիկ ուստարվա ապրիլ-մայիս ամիսներին, ապա դրանք կմշակվեն 2018թ.-ի սեպտեմբերին:

Բաժինը ՈՒՄՎ-ից ստացել է մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները, կատարել է այդ արդյունքների վերլուծություն, նաև համեմատական վերլուծություն նախորդ ուստարիների նույն հարցման արդյուքների հետ, կազմել է հաշվետվություն, ամփոփ արդյունքներն ըստ ֆակուլտետների կուղարկվեն ամբիոններ՝ քննարկման համար:

Ընթացքի մեջ է ուսանողներին ըստ ուսումնառության արդյունքների գնահատման մոտեցումների վերաբերյալ ուղեցույցը:

Նշենք, որ ռազմավարական խնդիրների շրջանակներում բաժինը տարբեր մեխանիզմներով իրականացրած ուսումնասիրություններից հավաքագրված կարծիքների և առաջարկությունների հիման վրա կազմել է առաջարկությունների փաթեթ, ներկայացրել տնօրենին, ընդ որում ներառված առաջարկությունների զգալի մասը ստացել են իրենց լուծումները:

ՄԿՈԱ բաժինը կազմել է «Ամբիոնի գործունեության կազմակերպման» ուղեցույց, որում ներկայացված են ամբիոնի գործավարության և մասնավորապես ՄԿՈԱ բաժնի հետ փաստաթղթաշրջանառության նպատակային և արդյունավետ կազմակերպման քայլերը, ձևաթղթերը և ուղղորդումները: Ուղեցույցը ներառում է այնպիսի փաստաթղթեր, որոնք հնարավորություն կտան ճիշտ պլանավորել, իրականացնել, գնահատել և

բարելավել ամբիոնի գործունեությունը: Ուղեցույցը նոր ուսումնական տարվա սկզբին կներկայացվի քննարկման և կներդրվի ամբիոններում:

Նշենք, որ մինչև մասնաճյուղի կառուցվածքային փոփոխությունը, բաժինը համակարգում էր նաև **Շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքները,** պլանավորելով դրանք համաձայն ռազմավարական ծրագրի **6-րդ նպատակի** իրականացման: Այդ պլանավորման շրջանակներում մի շարք աշխատանքներ են տարվել թե շրջանավարտների և թե արտաքին շահակիցների հետ: Իրականացված աշխատանքների մասին զեկուցվել է արտաքին կապերի բաժնի կողմից:

Նույն ձևով պլանավորվել և իրականացվել են նաև կայքի սպասարկման գործողությունները՝ նրա բովանդակային արդիականացման և եռալեզու տարբերակի գործարկման շրջանակներում, ինչի մասին նույնպես զեկուցվել է արտաքին կապերի բաժնի կողմից:

Այժմ նշենք ՄԿՈԱ բաժնի այն գործընթացները, որոնք առաջնահերթ են, պլանավորված էին, սակայն չեն իրականացվել.

- Չեն մշակվել մասնաճյուղի շրջանավարտների կողմից մասնաճյուղին և առանձին ֆակուլտետներին տարաբնույթ աջակցության տրամադրման մեխանիզմներ, շրջանավարտների աշխատանքները համակարգողի և մի քանի երիտասարդ ու մասնաճյուղի նախկին շրջանավարտ-աշխատակիցների կողմից փորձ է արվել ստեղծել շրջանավարտների միություն, այդ գործընթացն առայժմ ավարտին չի հասցվել:
- Չեն մշակվել մասնաճյուղի կառավարման գործընթացներում ուսանողների արդյունավետ ներգրավման և նրանց աշխատանքի ակտիվացման ընթացակարգեր:

Արտահայտվեցին –ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը և այլոք:

Մասնավորապես տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը շնորհակալություն հայտնեց ՄԿՈԱ բաժնի աշխատակիցներին, հսկայածավալ

և կարևոր գործընթացն իրականացնելու համար, նշեց, որ սա շարունակական գործընթաց է և դեռ շատ գործ կա անելու: Ա. Ցուցուլյանը կարևորեց նաև ՄԿՈԱ բաժնի համագործակցությունը այլ ստորաբաժանումների հետ, և նշեց, որ վերլուծության արդյունքները անհրաժեշտ է ուղարկել համապատասխան ստորաբաժանում՝ վերլուծելու և քննարկելու:

Իսկ տնօրենի խորհրդական **Ա. Մակարյանը** նշեց, որ մնացորդային գիտելիքների ստուգումները պետք է լինեն, ոչ թե ըստ առարկաների, այլ ըստ տվյալ տարվա համար կրթական ծրագրում նշված վերջնարդյունքների:

Այնուհետև առաջարկ եղավ բաժնի գործունեությունը գնահատել բավարար:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի 2018-2019 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Օրակարգի երկրորդ՝ « ԵՊՀ ԻՄ-ի 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում » հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետ **Ա. Դավթյանի** զեկույցը: Նա նշեց, որ.

- 2018-2019 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ամփոփիչ ատեստավորումը Մասնաճյուղում իրականացվել է համաձայն հաստատված գրաֆիկի՝ սույն թվականի մայիսի 18-ից մինչև հունիսի 23-ը:

2018-2019 ուստարում առկա և հեռակա ուսուցմամբ Մասնաճյուղն ունեցել է **377 շրջանավարտ**, այդ թվում առկա ուսուցմամբ՝ 154 շրջանավարտ (38 անվճար, 116 վճարովի) և հեռակա ուսուցմամբ՝ 223 շրջանավարտ, որոնցից 6-ը նախորդ տարիներից: Առկա ուսուցման համակարգում նախորդ տարիների ուսումնառողներից 1 ուսանող դիմել է ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու, սակայն գործընթացին չի ներկայացել:

Ֆակուլտետների ամփոփմամբ առկա ուսուցման համակարգում, համեմատական կարգով, մեծ թվով շրջանավարտներ ունեցել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, իսկ Բնական գիտությունների ֆակուլտետը 2018-2019 ուստարում ունեցել է վերջին երեք տարիների համեմատությամբ ամենաշատ շրջանավարտները, գրեթե հավասարվելով Տնտեսագիտական ֆակուլտետին:

Ըստ մասնագիտությունների ավելի շատ շրջանավարտներ ունեցել ենք Անգլերեն լեզու և գրականություն, Տնտեսագիտության տեսություն, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտություններում, իսկ նախորդ ուստարվա շրջանավարտների թվի համեմատությամբ՝ Հայոց լեզու և գրականություն, Անգլերեն լեզու և գրականություն, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա և Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտություններով:

Հեռակա ուսուցման համակարգում ևս մեծ թվով շրջանավարտներ ունեցել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, թեև շրջանավարտների թիվը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը բոլոր մասնագիտություններով: Հեռակա ուսուցման համակարգում ունեցել ենք նույնքան մասնագիտություններ, որքան նախորդ տարի (7) և բոլոր մասնագիտություններում շրջանավարտների թիվը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշին: Վերջին

երեք տարվա տվյալներով ամենաշատ շրջանավարտներ ունեցել ենք Տնտեսագիտության տեսություն և Պատմություն մասնագիտություններում:

Ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով առկա ուսուցման համակարգում ամենաբարձր ցուցանիշը գրանցել է Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությունը, իսկ ամենացածրը՝ Կիրառական արվեստ մասնագիտությունը: Նախորդ ուստարվա համեմատ ցուցանիշները բարձրացել են Քարտեզագրություն և կադաստրային գործ, Տնտեսագիտության տեսություն, Անգլերեն լեզու և գրականություն, Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտություններում:

Առկա ուսուցման համակարգում ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականը լավ և գերազանց է, իսկ հեռակայում՝ հիմնականում բավարար:

Հեռակա ուսուցման համակարգում ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով ամենաբարձր ցուցանիշը գրանցել է Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունը, իսկ ամենացածր ցուցանիշը՝ Պատմություն մասնագիտությունը՝ պայմանավորված շրջանավարտների կարողություններով: Երկրորդ տեղում է Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտությունը, որը նախորդ տարի ունեցել է ամենացածր ցուցանիշը: Նախորդ ուստարվա ցուցանիշները գերազանցել են Հայոց լեզու և գրականություն, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությունները:

Ամփոփիչ ատեստավորման գործընթացում ստացած միավորը բողոքարկել է մեկ ուսանող Պատմություն մասնագիտությունից: Ուսում-նառողի պատասխանի ձայնագրության քննարկման արդյունքում հանձնաժողովը միավորը թողել է անփոփոխ:

Գերազանցության դիպլոմ ստացել են 22 շրջանավարտներ (20 առկա, 2 հեռակա): Թվական տվյալներով առանձնանում են Անգլերեն լեզու և գրականություն և Տնտեսագիտության տեսություն մասնագիտությունները:

Վերջին երկու տարիներին գերազանցության դիպլոմ չեն գրանցվել Կիրառական արվեստ և Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտություններով:

Հեռակա ուսուցման համակարգում ինչպես նախորդ տարին այս տարի ևս ունեցել ենք գերազանցության դիպլոմով 2 շրջանավարտ՝ Սերվիս, Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտություններում:

Առաջին փուլով մագիստրատուրա կրթական աստիճանում ուսումը շարունակելու համար հայտ են ներկայացրել 8 շրջանավարտներ, որոնցից 4-ը Ընդհանուր Տնտեսագիտությունից, 4-ը՝ Անգլերեն լեզու և գրականությունից:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից տրված հաշվետվություններում ներկայացվել են նաև կարծիք-առաջարկներ: Կարծիքների ամփոփելով կարող ենք եզրակացնել.

ա) դասավանդման գործընթացը Մասնաճյուղում ընթանում է չափորոշիչներին համապատասխան և գիտելիքների մակարդակը համապատասխանում է բակալավր կրթական աստիճանի որակավորման չափորոշիչներին,

բ) պաշտպանության ներկայացված թեմաները ունեցել են գիտա-կանություն, չափորոշիչներին համապատասխան շարադրանք, արդիակա-նություն:

Հանձնաժողովների նախագահների կողմից կատարվել են հետևյալ առաջարկությունները.

Գիտելիքների բարելավման համար՝

Տնտեսագիտություն	- ավելի շատ ծանոթացնել միջազգային լավագույն փորձին
Կիրառական արվեստ, Դիզայն	- տեսական գիտելիքներին տրամադրել առավել մեծ ուշադրություն

Կարողությունների զարգացման համար՝

Պատմություն	- ուշադրություն դարձնել ուսանողների բանավոր խոսքի ճիշտ կառուցմանը
Տնտեսագիտության տեսության	- զարգացնել ներկայացման հմտությունները, մասնավորապես էական դրույթների վրա կենտրոնանալու և ժամանակի մեջ տեղավորվելու ուղղությամբ
Անգլերեն լեզու և գրականություն	- ուշադրություն դարձնել ավելի խորը վերլուծություն կատարելու կարողությանը
Սերվիս	- զարգացնել ինքնուրույն հետազոտական հմտություններ
Քարտեզագրություն	- ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքներում գործնական նյութերի (քարտեզներ, նկարներ, գրաֆիկներ) ընդգրկմանը
Կիրառական արվեստ	- ուշադրություն դարձնել կատարողական վարպետության հմտացմանը

Առաջարկների որոշ մասը վերաբերում է ռեսուրսների բարելավմանը՝

Պատմություն Ֆրանսերեն լեզու և գրականություն	- համալրել ժամանակակից մասնագիտական և մեթոդական գրականությունը - համալրել տեխնիկական միջոցները

Առաջարկների որոշ մասը վերաբերում է համագործակցությանը՝

Ֆրանսերեն լեզու և գրականություն	- կազմակերպել փոխադարձ այցելություններ համապատասխան կրթական ծրագրեր

	իրականացնող բուհերի հետ
Տնտեսագիտության տեսություն	- զարգացնել համագործակցությունը պետական տնտեսական քաղաքականություններ իրականացնող կառույցների հետ

ՈՒՄՎ բաժնի կողմից որպես առաջարկ կարծում ենք, որ՝ առաջիկա տարիների համար ավարտական աշխատանքների ղեկավար կարելի է նաև ընտրել պրակտիկ փորձ ունեցող ղեկավարների: Մանրամասն հաշվետվությունը տես հավելված 1:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը:

Ա. Ցուցուլյանը նշեց, որ կան այնպիսի դեպքեր երբ ուսանողի ՄՈԳ-ը 12 միավոր է բայց նա ավարտական աշխատանքի կատարման համար ստանում է 18 միավոր, անհրաժեշտ է վերլուծել այսպիսի դեպքերը: Ա. Ցուցուլյանը նշեց, նաև, որ 2019թ. սեպտեմբերի մեկից սկսած կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների հաստատման և իրականացման ամբողջ պատասխանատվությունը լինելու է մասնագիտական ամբիոնների վրա:

Ա. Մակարյանը նշեց, որ ՀՀ-ում չկա կրթության չափորոշիչ, իսկ վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսանողների մոտիվացիան առաջին և երկրորդ կուրսերում նվազում է, իսկ սկսում է բարձրանալ երբ սկսում են անցնել մասնագիտական առարկաներ, իսկ կուրսային և ավարտական աշխատանքները գնահատելիս եբեմն գնահատում ենք ղեկավարին, կարելի է ունենալ երկու ղեկավար, մեկը Մասնաճյուղից, մյուսը արտաքին շահեկիցներից:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ-ի 2018-2019 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատել բավարար:

<u>Օրակարգի երրորդ՝</u> «ԵՊՀ ԻՄ-ի 2020-թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի կապակցությամբ լսեցին **ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանի** հաղորդումը: Նա նշեց, որ այս տարի ունեցել ենք 218 դիմորդ, որոնցից 32 դիմորդ կտրվել են Հայոց լեզու և գրականություն առարկայից, 11 դիմորդ կտրվել են մաթեմատիկա առարկայից, կենսաբանությունից կտրվել են բոլորը և այս պահին առանց ներբուհական քննությունների ունենք հետևյալ պատկերը՝ կիրառական արվեստում ունենք 25 դիմորդ, ՏՄՄ՝ 12 դիմորդ, ՀԼԳ՝ 10 դիմորդ, պատմություն 8 դիմորդ, ՖԼԳ՝ 6 դիմորդ, հոգեբանություն՝ 5 դիմորդ: Պարզվում է մարզում կա կենսաբանություն առարկայի որակի խնդիր: ՌԼԳ մասնագիտությամբ ունենք 3 դիմորդ, բնապահպանություն և բնօգտագործում մասնագիտությամբ ունեցել ենք 5 դիմորդ, 5-ն էլ կտրվել են կենսաբանությունից, ֆինանսներ մասնագիտությամբ ունենք 21 դիմորդ, զբոսաշրջություն՝ 28 դիմորդ, ԻԿՄ՝ 28 դիմորդ: Կարելի է ենթադրել, որ մյուս տարվա մասնագիտությունների ցանկում որտեղ կա կենսաբանություն առարկան ունենալու ենք խնդիրներ: Ա. Ցուցուլյանը նշեց, որ արժե քննարկել օրգանական գյուղատնտեսության հետ կապված որևէ կրթական ծրագիր ներդնելու հարցը, պետք է լուրջ աշխատել հոգեբանության վրա, երկրորդ տարին ՏՄՄ մասնագիտությամբ ունենք ուսանողների թվի շարունակական նվազում, պետք է պարզել ինչով է պայմանավորված:

Արտահայտվեցին - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի փոխդեկան Վ. Աղաբաբյանը, տնօրենի խորհրդական Ա. Մակարյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը, ՀՈՒԲ վարիչ Մ. Զուրաբյանը, ամբիոնի վարիչներ Լ. Սարգսյանը և Դ. Թինոյանը և այլոք:

Վ. Աղաբաբյանը նշեց,որ ՏՄՄ մասնագիտությամբ նախորդ տարիներին ընդունված ուսանողների մեծ քանակը պայմանավորված է եղել նաև այլ մասնագիտությունների մրցակցությունից դուրս մնացած և որպես երկրորդ մասնագիտություն ՏՄՄ-ն նշած ուսանողներով /մոտ 12 ուսանող/, նշեց, նաև որ եթե ունենանք գյուղատնտեսության հետ կապված կրթական ծրագիր ապա այդպիսի ուղղվածություն ունեցող քոլեջների ուսանողները հնարավորություն կունենան շարունակելու իրենց մասնագիտական կրթությունը Մասնաճյուղում:

Ա. Մակարյանը նշեց, որ գյուղատնտեսական մասնագիտություններ ունենալը թանկ է նստում ուսումնական հաստատությունների վրա, քոլեջները չունեն անհրաժեշտ նյութատեխնիկական բազա որակյալ կրթություն ապահովվելու համար, իսկ Եվրոմիությունը հատկացրել է դրամաշնորհներ ՀՀ-ի 4 քաղաքներում՝ Գորիսում, Վանաձորում, Սիսիանում, Գավառում գործող քոլեջներին անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով ապահովելու համար:

Լ. Սարգսյանը առաջարկեց լուռ հետևել այս ուղղությամբ ՀՀ-ում ընթացող տենդենցներին և կտրուկ քայլեր չանել:

Դ. Թինոյանը առաջարկեց հեռակա ընդունելությամբ պատմություն մասնագիտությամբ ՀԼԳ առարկայի քննությունը դարձնել ոչ մրցութային, իսկ Ա. Դավթյանը առաջարկեց նույնը անել նաև ֆինանսներ մասնագիտությամբ:

Մ. Զուրաբյանը գտնում էր, որ ընդունելությունը պետք է լինի առանց քննությունների:

Առաջարկվեց մասնագիտությունների ցանկը քննարկել մասնագիտական ամբիոններում և սեպտեմբերին ներկայացնել առաջարկներ:

Որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/3

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u>՝ « ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2019թ. հարցման արդյունքների մասին›› հարցի կապակցությամբ լսեցին **ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի** հաղորդումը: Հաշվետվությունը ամբողջությամբ տես հավելված 1-ում:

Արտահայտվեցին – Տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը:

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է վերլուծության արդյունները տրամադրել ֆակուլտետներին և ամբիոններին

Այնուհետև առաջարկեցին գործունեությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇՈՒՄ N 39/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման 2019թ. հարցման արդյունքները գնահատել բավարար:

<u>Ընթացիկ հարցեր:</u>

5.1 Լսեցին- « ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման 2019-2023թթ. և հեռակա ուսուցման 2019-2024թթ. ուսումնական պլանների հաստատում›› հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի առկա ուսուցման 2019-2023թթ. և հեռակա ուսուցման 2019-2024թթ. ուսումնական պլանները:

5.2. Լսեցին «Պատմություն (022201.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին›› հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել Պատմություն (022201.00.6)՝ կրթական ծրագիրը համաձայն հավելված 3-ի։

5.3. Լսեցին « Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (061101.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին » հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/7

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հաստատել (Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (061101.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 4-ի։

5.4. Լսեցին « Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (011301.00.6) կրթական ծրագիրը հաստատելու մասին » հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/8

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

➢ Հաստատել Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (011301.00.6) կրթական ծրագիրը համաձայն հավելված 5-ի։

5.4. Լսեցին «Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ Հովսեփ Մովսեսյանի հեղինակած ‹‹Քաղաքագիտություն›› դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը տպագրության երաշխավորելու հարց ›› հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի գիտքարտուղար

Մ. Աթոյանի հաղորդումը: Նա նշեց, որ «Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ Հովսեփ Մովսեսյանի հեղինակած ‹‹Քաղաքագիտություն›› դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը քննարկվել է ամբիոնում, գրախոսվել է Ա. Հովհաննիսյանի կողմից և ուղարկվել գիտական խորհրդի անդամներին:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Ցուցուլյանը, Գ. Սիմոնյանը, Դ. Թինոյանը, Ա. Մակարյանը, Գ. Հովհաննիսյանը, Մ. Ճաղարյանը, Մ. Միքայելյանը և այլոք:

Մասնավորապես նշվեց, որ սա լավ նախադեպ է որպես ուսումնամեթոդական աշխատանք, սակայն ‹‹Քաղաքագիտություն›› անունով դասընթաց առավել ևս նշված ժամաքանակներով չկա, ոչ ԵՊՀ ԻՄ-ում, ոչ էլ ԵՊՀ-ում, ժամաքանակներում սեմինար նախատեսված չէ սակայն գնահատման ռազմավարության մեջ նշված են:

Առաջարկվեց աշխատանքը առավել մանրակրկիտ ուսումնասիրելու և գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնելու համար ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի քննարկմաը:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի կանոնակարգի 2-րդ և 4-րդ կետի 2)-րդ ենթակետով, ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5)-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ Հովսեփ Մովսեսյանի հեղինակած ‹‹Քաղաքագիտություն›› դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի քննարկմանը:
- Հանձնարարել ԵՊՀ Իմ-ի մեթոդական խորհրդին ուսումնասիրել, և տալ եզրակացություն Հովսեփ Մովսեսյանի հեղինակած ‹‹Քաղաքագիտություն›› դասընթացի ուսումնամեթոդական փաթեթի վերաբերյալ:

5.5. Լսեցին «Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Քնարիկ Հովհաննիսյանի և Մելանյա Բարսեղյանի հեղինակած ‹‹Սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում›› ուսումնամեթոդական ձեռնարկը տպագրության երաշխավորելու մասին›› հարցի վերաբերյալ:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշեցին

ՈՐՈՇՈՒՄ N 39/10

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 13-րդ ենթակետով և Երևանի

պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 13-րդ ենթակետով, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի կանոնակարգի 2-րդ և 4-րդ կետի 2)-րդ ենթակետով, ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5)-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

- Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Քնարիկ Հովհաննիսյանի և Մելանյա Բարսեղյանի հեղինակած ‹‹Սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում›› ուսումնամեթոդական ձեռնարկը ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդի քննարկմանը:
- Հանձնարարել ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդին ուսումնասիրել, և տալ եզրակացություն Քնարիկ Հովհաննիսյանի և Մելանյա Բարսեղյանի հեղինակած ‹‹Սխալների կանխարգելման և հաղթահարման ուղիները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում›› ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ:

Գիտական խորհրդի նախագահ_____ Ա. Վ. Ցուցուլյան

Գիտքարտուղար_____Մ. Ս. Աթոյան